ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (0235)62197 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ << ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ>> ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով՝ << Տեղական տուրքերի և վճարների>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10, 11 և ինչպես նաև <<Տեղական ինքնակառավարման >> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի պահանջներով.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնքի 2015թ Տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճանապարհաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի , շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանել

1)հիմնական օբյեկտների համար՝

ա) Մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ:

Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ) 201-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ:

501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ:

1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ:

2) Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա) Մինչև 20 քմ . ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

բ) 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող

դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների վերակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառման նշանակության փոփոխման համար սահմանել՝ ***1500 դրամ:***

3. *Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների* ***1.2.3.*** *կետերի համար օգտագործել է* ***0.5*** *գործակիցը, քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝* ***2500 դրամ:***

4. *Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝*

1) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական և շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. *Համայնքի տարածքում՝*

1) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 350 դրամ, մեկ քառակուսի մետրի համար:

2) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150.000 դրամ:

3) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքով զբաղվող օբյեկտների համար սահմանել՝ 30.000 դրամ:

4) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000 /երեք հազար/ դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 /մեկ հազար/դրամ

6. *Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները/, խաղատները ժամը* ***24.00-****ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝*

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ

2) խաղատների համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/դրամ

3) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

4) բաղնիքների / սաունաների/ համար՝ 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ

5) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ:

***7.** Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝*

1) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 / երկու հազար հինգ հարյուր/ դրամ

3)Այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

4)դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ

***8.** Համայնքի արխիվից փաստաթղթի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար ընթացիկ տարվա համար տեղական տուրքը սահմանել է **1000** /մեկ հազար/ դրամ:*

***9.** Համայքի տարածքում / բացառությամբ/ թաղային համայնքների / մարդատար տաքսու/ բացառությամբ տաքսիների ծառայությունն իրականացնելու թույլտվության համար ընթացիկ տարվա տեղական տուրքը սահմանել՝ **5000** /հինգ հազար/ դրամ:*

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքները/կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու , հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայության դիմաց հատուցման վճար սահմանել՝ **5000** /հինգ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **1000** /մեկ հազար/ դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից փոխհատուցման վճարը սահմանել՝ **2000** /երկու հազար/ դրամ:

Կողմ 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՏԱՐՈՆ
4. ԵՂՈՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ